

# Title: TRUST IN THE NAME OF THE LORD

by Dr. w. euGene Scott, PhD Stanford University,  
Preached at the Los Angeles University Cathedral  
Copyright ©2007, Pastor Melissa Scott; all rights reserved

## Վերնագիր. ԱՊԱՎԻՆԻՐ ՏԻՐՈՋ ԱՆՎԱՆԸ

Դր. Ժենե Սքոտի կողմից Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր,  
Քարոզվել է Լոս-Անջելեսի «Յունիվերսիթի կաթողիկոս»-ում  
Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են  
(Բոլոր աստվածաշնչյան մեջբերումները կատարված են Աստվածաշնչի Արարատյան թարգմանությունից)

## ԱՊԱՎԻՆԻՐ ՏԻՐՈՋ ԱՆՎԱՆԸ

Երբ դու դուրս գաս այստեղից, 21-րդ անգամ լսելով այս ուղերձը, որը ես քարոզում եմ ամեն տարի, հույսով եմ, որ այն ուղղակի չի մնա քո ուղեղի որևէ մի ծայքում, այլ կմտնի քո կյանքի ողնուղեղի և Աստծո հետ հարաբերությունների մեջ, ու կօգնի քեզ հաղթահարել որոշ դժվարություններ 1996թ-ի ընթացքում:

Այսպիսով, եկեք գնանք Հին Ուխտ, Եսայա 50: “Ո՞վ կա ձեզանում”, և անմիջապես պարզ է դառնում ուղերձի նպատակը, որը կենտրոնացված է՝ “Ո՞վ կա ձեզանում Տերից վախեցող, Նրա ծառայի ձայնին լսող”: Այստեղից երևում է, որ մենք գործ չունենք հոգևոր հանցագործի կամ անբարիշտի հետ. Մենք գործ ունենք մեկի հետ, որը վախենում է Տերից, այդ բառի ոչ ժամանակակից իմաստով՝ հարգում է, ընդունում է Նրա մեծությունը և ճանաչում է Նրա առավելագույն իրավունքները մեր նկատմամբ: Մենք գործ չունենք անբարիշտի հետ: Մենք գործ ունենք մարդկանց այն հատուկ խմբի հետ, որոնք, հույսով եմ, ներկայացված են այսօր այստեղ:

“Ո՞վ կա ձեզանում Տերից վախեցող, Նրա ծառայի ձայնին լսող”: Ես կրկին օգտագործում եմ ոչ “անբարիշտ” բառը: Ոմանք իրականում փորձում են “վախենալ Տերից, լսել Նրա ծառայի ձայնին”: Երբ դու լսում ես հռչակված ճշմարտությունը, և եթե դա քո մեջ արձագանքում է և հետք է թողնում, դու ջանում ես լինել դրա հետևորդը և քեզ նմանները շատ են: Այստեղ, իհարկե, չկա մի մարդ, որ չունենա Տիրոջ երկյուղը, որ գոնե չփորձի հնազանդվել Նրա ծառայի ձայնին, որովհետև ես կարծում եմ, որ դու փորձում ես հնազանդվել, եթե անգամ այն համարում ես Նրա ծառայի ձայն: Ուրեմն, այս ուղերձը քեզ համար է, “որ գնում է խավարումը և ճառագայթ չունի”:

Այսպիսով, դու արդեն 20-րդ անգամ ես լսում այս քարոզը: Դու կասես. “Ես գիտեի այս ճշմարտությունը դեռ անցյալ տարի”: Դու ապրում ես քեզ համար և հանկարծ լույսը մարում է և այլևս չես տեսնում ոչ մի ճանապարհ: Ես չգիտեմ, թե ո՞ւմ է ավելի շատ վերաբերվում այս ուղերձը, բայց որտեղ էլ լինես՝ այստեղ նստած, հեռուստացույցով նայելիս, ռադիոյով լսելիս, ես համոզված եմ, որ այստեղ կան մարդիք, որոնք թաքնվում են դեմքերի խիզախ արտահայտության տակ, բայց գիտեն, որ քայլում են խավարի մեջ և չեն տեսնում լույսը: Ինչպիսի ճնշում էլ ունենաս՝ հանգամանքներ, ֆինանսներ, առողջություն, սեր, կտորված հարաբերություններ, և այլ խավարի երևույթներ, որոնք ճնշում են, և դու չես կարողանում գտնել քո արարքների մեջ մի պատճառ, որ բացատրես այդ խավարը: Դու ուղղակի դրա մեջ ես և դա քեզ կուլ է տալիս: Իսկ եթե սա այսօր քո մասին չէ, ապա ես ուզում եմ ասել, որ այն հավանաբար կվերաբերվի քեզ մինչև այս տարվա վերջ, և իմ սիրած արտահայտությունն է “Ուրախացեք սուրբեր, ավելի վատ է լինելու”:

Ես չեմ ուզում շարունակել այս ուղերձը, քանի դեռ համոզված չեմ, որ մենք նույն պիքի վրա ենք: Դու գիտե՞ս ինչի մասին եմ ես խոսում: Այո, ես գիտեմ, որ շատ քրիստոնյա քարոզիչներ ասել են քեզ, որ եթե դու ծառայում ես Աստծուն ճիշտ, այս բաները չեն կարող պատահել քեզ հետ: Քույր Սալսը և Եղբայր Ջիմմիսը մատնացույց են անում և ասում՝ “Եթե դու անգամ ակնարկես ինչ-որ մեկին, որ նա խավարի մեջ է, ապա նրանք կհագնեն արդարության թիկնոցը, ավելի ճիշտ, ինքնարդարության թիկնոցը, ետ կքաշվեն քեզանից և դու հարց կկարդաս նրանց աչքերում” “Այդ ի՞նչ սխալ ես արել, որ դա պատահել է քեզ”: Խավարը պատում է նրան “Ո՞վ է Տերից վախենում և Նրա ծառայի ձայնին լսում, բայց միևնույն է խավարի մեջ է քայլում, առանց լույսի”: Լավ, ի՞նչ անենք մենք: Քանի՞սն են ձեզանից ուզում հեռանալ այստեղից, որովհետև այս ուղերձը նրանց համար չի: Բարձրացրեք ձեր ձեռքերը, որովհետև ես ուզում եմ ուղեկցել ձեզ դուրս: Եվ այսպես, ես հարցնում եմ երկրորդ անգամ՝ “Քանի՞սն են ձեզանից հասկանում ինչի՞ մասին եմ ես խոսում”: Խավար՝ և իսկույն մի փսփսացող միտք է հայտնվում, “Ի՞նչը այնպես չեմ արել”, և մենք միշտ շփոթվում ենք: “Ուրեմն, թույլ տուր քեզ ասել ի՞նչ պետք չէ անել, լա՞վ”:

11-րդ խոսք: Ես այն արագ կկարդամ, քանի որ ուղերձի իմաստը նրանում է, թե ի՞նչ պետք է մենք անենք: “Ահա դուք ամենքդ, որ կրակ էք վառում, և կայծերով շրջապատվում, գնացեք ձեր կրակի վառվածքի մեջ, և ձեր կրակ տված կայծերի մեջ: Սա Իմ ձեռքիցն էրավ ձեզ համար, դուք ցավով պիտի պառկեք”: Ես կարող էի արագ անցնել, եթե կարողանայի, որովհետև դա բարդ է, քանի որ մենք հիմնականում, այդպես ենք արձագանքում մեր կյանքում հանդիպող արգելքներին ու խավարին: Ես գիտեմ, թե ինչպես է Ժենե Սքոտը վարվել տարիներ շարունակ: Նրանք, ովքեր ինձ լավ են ճանաչում, կամ շրջապատում են ինձ, հավանաբար, կծիծաղեն, որովհետև ես ծխում եմ ծխամորձ, ծխում եմ սիգար և մի քանի տարի առաջ սկսեցի ստանալ նվեր մատիտի պես բարակ կրակայրիչներ այն ընկերներից, որոնք մատակարարում էին ինձ ծխախոտով և սիգար: Դրանք ամենասարսափելի և նյարդայնացնող բաներն են, որ երբևէ դուք տեսել եք: Նրանք միշտ վերջանում են այն պահին, երբ ամենից շատ են պետք: Փոքրիկ մատիտներ... ես ուզում եմ ցույց տալ ձեզ, տեսնում եք, դրանք չկան այն պահին, երբ պետք են: Ես սովորաբար պահում եմ ինձ մոտ 4-5 հատ և հենց այն պահին, երբ ես ուզում եմ մեծ տպավորություն թողնել, օգտագործելով այդ մոդայիկ կրակայրիչը, ես այնպես եմ հիասթափվում, որ ուզում եմ վերադառնալ իմ ԲԻԶ-ին: Դրանք երբեք քեզ չեն հիասթափեցնի:

Այսպիսով, նրանք, ովքեր ինձ լավ գիտեն, կծիծաղեն այս բաների վրա, որովհետև ես պատրաստվում եմ պատկերավոր խոսքով նկարագրել իմ ձգտումը, երբ խավարն է գալիս: Ես կարող եմ վառել լուցկին ավելի արագ, քան որևէ մեկը, ինչը պատկերավոր ասում է... Կա մի տղա, որը աշխատում է ինձ մոտ, նա տիպիկ օրինակ է հանդիսանում նրա, ինչ ես անցել եմ Աստծո հետ տարիների ընթացքում: Ահա թե ինչու եմ ես դա այդքան արագ հասկանում: Մեկին մյուսի միջոցով ես ճանաչում: Այդ տղան ինձ մոտ է աշխատում, և ես պատմում եմ մի դասական դեպք:

Մենք թոչում էինք ինձ մոտ տուն Լայկ Ալմանոր: Օդանավակայանում վերցրեցինք մեքենա: Այդ գարնանը մենք առաջին անգամ պետք է բացեինք տունը, այնպես որ ես գիտեի, որ տանը մթերք չկա: Մենք տեղավորվեցինք փոքրիկ, գեղեցիկ մեքենայի մեջ, որը միանում է ցանկացած եղանակին: Դու կարող ես թողնել այն 10 ոտնաչափ ձյան տակ, հետո փորես և այն միևնույն է կմիանա: Հիմա դրանցից էլ չեն արտադրում: Դա մի հին ֆուրգոն է, բայց այն միանում է: Այսպիսով, մենք տեղավորվեցինք մեքենայի մեջ տղաների հետ, որոնք եկել էին օգնելու ինձ բացել տունը: Մինչև իմ տուն գնալը, մենք վարեցինք դեպի Չեստեր, փոքրիկ մի քաղաք օդանավակայանից մոտ մեկ մղոն հեռավորության վրա: Ահա, մենք լիցքավորման կայանում լիցքավորում ենք մեքենան և քանի որ, ես գիտեմ, որ տանը մթերք չկա, ասում եմ նրան, ինչպե՞ս ես կոչեմ նրան: Ես չեմ ուզում ասել այդ մարդու իրական անունը: Ի՞նչ անուն օգտագործեմ: Ես չունեմ Հակոբ անունով մեկին, այնպես որ, թող լինի Հակոբ, կարծում եմ, որ ամեն մեկը, ով աշխատում է ինձ հետ, գիտի, թե ում մասին է խոսքը: “Հակոբ...”: Եվ այսպես, փողոցի մյուս կողմում կա մթերային խանութ: Դա քաղաքի միջով անցնող լայն, չորս գծանի, խիտ երթևեկությամբ պողոտա է, և մենք կանգնած ենք լիցքավորման կայանում, փողոցի մյուս կողմում: Եվ ես ասացի. “Հակոբ, գնա այն մթերային խանութը...” և պատրաստվում էի ասել

“գնիր այս բաները”: Բայց երբ ես ասացի “գնա”, նա արդեն գնաց և երբ ես ասացի “այն մթերային խանութը” նա արդեն թեքվում էր այդ ուղղությամբ և մինչ ես կվերջացնեի նախադասությունը, նա արդեն ճանապարհի մյուս կողմում էր: Նա գնում էր մթերային խանութ, առանց իմանալու, թե ի՞նչ են ուզում գնել:

Այսպիսին են ես Աստծո հետ: Այդպիսին էր Հակոբը Հին Ուխտում: Ոչ մի վատ բան չկար նրանում, ինչ Հակոբը պատրաստվում էր անել: Մինչև Հակոբի և Եսավի ծնվելը Աստված պարզ հայտնել էր. “Հակոբին սիրեցի, Եսավին ատեցի”: Բայց Հակոբը պատրաստվում էր իրականացնել Աստծո կամքը իր սեփական ուժերով: Նա չէր կարող սպասել, մինչև Աստված դա անի: Նա միաբանվեց իր մոր հետ դավ նյութել, այս գույգը միշտ կարող էր գուշակել, թե ինչպես իրականացնել Աստծո գործը, մինչև Նրա գալը: Հակոբ՝ նշանակում է “կրունկից բռնած”: Նա դուրս եկավ մոր ընկերքից, Եսավի կրունկից բռնած: Առաջինը ծնվեց Եսավը և հետո Հակոբը, Եսավի ոտքից բռնած: Հակոբի կարծիքով, Եսավը չպետք է առաջինը ծնվեր: Նրանք պայքարում էին դեռ արգանդում. “Աստծո օգնությամբ, ես կխանգարեմ նրան”: Այսպիսին էր Հակոբի կյանքի պատմությունը, մինչև նրա ուժերը չսպառվեցին, և վերադառնալով այդ նշանակալից գիշերվան, երբ նա կռվում էր հրեշտակի հետ, մինչև որ վերածվեց կադի, երբ հրեշտակը կպավ նրա ազդրին և Հակոբը այլևս չէր կարող պայքարել: Միակ բանը, որ նա կարող էր անել, բռնվելն էր: Եվ երբ հրեշտակը փոխեց նրա էությունը, փոխեց նաև նրա անունը Հակոբից՝ “կրունկից բռնած”, “Իսրայել”: Իս-րա-յել՝ “իշխան, որը ունի զորություն Աստծո հետ”, բայց տառացիորեն թարգմանվում է Ել, կամ “Աստծուց կառավարվող”. Կառավարվել Աստծով՝ նոր զորություն Աստծո հսկողության տակ: Ահա թե ինչի մասին է ասվում այստեղ:

Ինչպիսի խավարի էլ դու հանդիպես, մեր առաջին արձագանքը ռեակցիան խնդիրը ինքնուրույն լուծելն է՝ լուցկի վառել, բոց բռնկել, կրակ վառել, որ քշենք խավարը, օգտագործելով միայն Աստծուց տրված տաղանդները, Աստծուց առաջ ենք ընկնում, մեզանով խնդիրը լուծելու համար: Ես սա քարոզում էի անցած մի քանի շաբաթների ընթացքում: Դու հանձնում ես քո ճանապարհները Տիրոջը, հանդարտ և համբերատար սպասում ես, հանդարտ և համբերատար սպասում ես: Խոստմունքը այստեղ որոշակի է: Ինձ մեկ է, թե ինչքանով ես դու նվիրված Աստծուն, ինչքան լավն ես, ինչպիսի ջանքեր ես դնում ճիշտ վարվելու համար, ճանապարհիդ մի մասը անցնելու է խավարի միջով՝ հանգամանքներ, երբ տեսադաշտդ խավարում է, և եթե դու պարտություն ես կրում, վառելով քո սեփական կրակները, գործի ես դնելով քո սեփական մարմնավոր գործիքները, որպես ազատագրման միակ լուծում, քո սեփական տաղանդները, եթե սկսում ես շարժվել բոլոր ուղղություններով միաժամանակ, անցնել ճանապարհի մյուս կողմի մթերային խանութը, առանց իմանալու թե ի՞նչ է պատրաստվում Աստված պատվիրել, երբ դու պատրաստվում ես “քայլել լույսի մեջ քո սեփական ճրագով”: Դու պատրաստվում ես ստանալ լույս, որը դու ես ստեղծել և ոչ ավելին: “Եվ ցավով պիտի պառկեք”: Ես չգիտեմ, թե ավելի պարզ ինչպես կարելի է ասել: Ես չեմ ուզում քարոզել միայն սրա մասին:

Քրիստոնեական կյանքի մեջ կարծես մի բան ներկառուցված լինի՝ նրանց, ովքեր հավատացել են Աստծո անտեսանելի ներկայությանը ամեն ժամանակ, կարծես ներկառուցված լինի Հակոբի կաղությունը: Կամ, ինչպես ես ասում եմ արդեն 20 տարի, պահեք լուցկու տուփը անհասանելի տեղում, քանի դեռ նա ավելի շատ գլխացավանք չի պատճառել, վառելով քո սեփական կրակը:

Ես արտահայտվում եմ փոխաբերական իմաստով: Քրիստոնեությունը այն չէ, որ մենք սպավիհնում ենք Աստծուն, որպես կամակատար որոշ դեպքերում, երբ մենք ինքներս անկարող ենք: Քրիստոնեությունը՝ ճանապարհ է, քայլ, ճանապարհորդություն, սպրելածև, որը հայտնվում է և նվիրվում չեղանցող ներկայությանը: Նա միշտ ներկա է: Բեզ պետք չէ նվիրվել, որ արարես Իր ներկայությունը: Բայց երբ աշխարհը, մարմինը և սատանան ճնշում են, տիրում և հսկում մեզ, Աստծո Հոգին հեզ է: Նա չի ճնշում: Նա չի պատրաստվում օգնել նրանց, ովքեր չեն հրավիրում Իրեն: Նա, իրականում, չի կարեկցում ինքնավստահներին, և եթե դու ուզում ես վառել քո սեփական լուցկին, լուծել քո խնդիրները, վառել քո կրակը, լուսավորել քո խավարը,

Նա քեզ թույլ կտա: Ահա, թե ինչով են ձեզանից շատերը զբաղված, և թե ինչ է հաճախ անում ժենն Սքոտը, բայց ես դառնում եմ ավելի իմաստուն:

Թաքցրեք լուցկին անհասանելի տեղում: Հակոբը կաղում էր իր ողջ կյանքի ընթացքում, որպեսզի հիշի, որ կառավարվում է Աստծուց: Թույլ տուր Աստծուն ղեկավարի, խառնաշփոթ ստեղծելու փոխարեն, որը Նա հետո պետք է կարգավորի: Այդպես խավարից դուրս չեն գալիս: Խավարը գալիս է: Ի՞նչ պետք չէ անել: Լսիր Աստծուն, և եթե Նա չի խոսում, ապա գնա առաջ և վառիր լուցկին: Բայց դադարի թարտալ, պտտել անիվները, լարվել, նյարդայնանալ և ամեն գնով ազատվելու փորձեր անել: Ես չեմ պատրաստվում դրա վրա ժամանակ ծախսել: Եթե դու մինչ այժմ բան չհասկացար, ապա հաջողություն:

Իսկ ի՞նչ ես անում դու, երբ այդպես չես վարվում: Բարի, դու սպասում ես բավական ժամանակ, մինչև որ վառում ես քո կրակը որևէ խավարի մեջտեղում, որպեսզի անես հետևյալը. “Թող որ նա ապավինի Տիրոջ անվանը”: Այսպիսով, դա շատ պարզ հայտարարություն է: Թույլ տվեք մանրամասն բացատրել: “Թույլ տվեք նրան ապավինել”՝ **իքտտեհ**, որը երբայերեն բառ է: Այդ բառի արմատն է **բետեհ**: Դա նշանակում է “նետվել ինչ որ բանի վրա”, դառնալ անօգնական, կորցնել հավատքը քո նկատմամբ, որը սովորաբար պատկերացնում ենք, ընկնել երեսնիվայր ինչ-որ մեկի առջև: Այս բառը երբայերենում ամենաարտահայտիչ բառերից մեկն է, որը նկարագրում է մեր վերաբերմունքը Աստծուն կարիքի ժամանակ: “Թող ընկնի երեսի վրա” եթե դու դա անես “Աստծո առաջ”: Սա այնքան պարզ է, ինձ թվում է ես վիրավորում եմ ձեր մտավոր կարողությունները: Բայց սա պարզ բաներ են, որ մենք անտեսում ենք:

“Օ՛, ես խավարի մեջ եմ”: Չիսկ, չիսկ, չիսկ, չիսկ, չիսկ: “Որտե՞ղ է իմ... որտե՞ղ է այս անհիժված կրակայրիչը”: Խավարը գալիս է: Նետիր քեզ, անհույս աղոթքով ապավինիր ինչի՞ն: “Տիրոջ անվան վրա”: Հավաքելով մնացած ամեն ինչ մի կույտ, հավաքելով և քշելով խավարը տեսադաշտից, լիովին խոնարհ նվիրվածությամբ, ես նետում եմ ինձ ինչի վրա: “Տիրոջ Անվան վրա”:

Հիմա ես հասա աստվածաբանական և խորը, բայց այստեղ նախադասությունը թվում է անիմաստ, ”Տիրոջ Անուններին”: Ինչո՞ւ այդքան շատ անուն: Եկեք սկսենք սկզբից: “Սկզբում **Էլոհիմը** ստեղծեց երկինքն ու երկիրը”: Արմատը՝ սքանչելի բառ է, որը նշանակում է, ինչպես հրեաներն են կարողում աջից ձախ, բայց անգլերենում հակառակ կարդալուց **Էլ**, “Բարձրյալ”: Առաջին արտահայտումը Աստծո անվան, “Բարձրյալ”, ամենից վեր և հոգնակի Ծննդոցի սկզբից: “Սկզբում **Էլոհիմը**”, Բարձրյալները, Աստվածները “ստեղծեցին երկինքն ու երկիրը”: Այնուհետև դու հասնում ես Աստծո ընտրությանը ժողովրդին, Աբրահամին: Եվ հետո սկսում է ավելացնել **Էլ** բառին այլ բառեր: Դուք ունեք **Էլ** պլյուս: **Էլուամ**՝ նշանակում է “Ամենաբարձրյալ”, Բարձրյալ Աստված, եթե Բարձրյալը բավական չէ, ապա “Ամենաբարձրյալ, ամենից վեր”:

**Էլ Շադայ**: Ես քարոզում էի սա Մայրերի օրը, բառացի ասած “կուրծք ունեցող”: Սա կրծքով կերակրող մոր պատկեր է, որ մատակարարում է երեխայի բոլոր կարիքները: Եվ այդ անունները շարունակում են հայտնվել, ինչպես Աստված է Իրեն հայտնում այն մարդուն, ով ապավինում է Տիրոջը, օրինակ, Աբրահամին, որին Աստված ընտրեց այս երկրում ապրողների միջից, որ լինի Իր մասին հայտնությունների կենտրոնում:

Այնուհետև գալիս է մեծ հայտնությունը Իսրայելի ժողովրդի մասին, որին Մովսեսը առաջնորդեց, և որը վերջ ի վերջո ստանում է բոլոր հայտնությունները Սինայ սարի վրա: Բայց հետո Աստված ասում է. “Դուք Ինձ գիտեիք **Էլ** անունով”, “Բարձրյալ”, “բայց հիմա Ես պատրաստվում եմ հայտնել Ինձ որպես Յահվե, որպես Եհովա” մեկ ուրիշ Աստծո անուն, այնպիսի հայտնի և փոփոխվող, որ որոշ Աստվածաշնչի ուսումնասիրողներ փորձում են ունենալ երկու տարբեր գրվածք՝ Հնգամատյանի, Աստվածաշնչի սկզբի գրքերի, որովհետև ոմանք երկրպագում են **Էլ**-ին, ոմանք էլ **Յահվե**-ին: Ոչ: Դա նույն Աստվածն է, Ով ընդարձակում է հայտնությունը Իր մասին մարդկանց և անում է դա անունների միջոցով: Անունները որոշակի բաներ են նշանակում, այլ ոչ թե ուղղակի պատահական անվանումներ

են: Երբ Նա հայտնում է բնավորության որևէ գիծ, այնուհետև Նա բացատրում է այդ բնավորության գիծը տալով Ինքն Իրեն անփոփոխ Անուն: Եվ դա ուղեկցվում է քառանկյուն բառով, Յահվե. Այդ մեծ չորս բաղաձայնից բաղկացած բառը **յա-հա-վա-հ, Յ-Հ-Վ-Հ**, և (քանի որ Գերմանացիները չեն կարողանում արտասանել “վ”), անգլերենում դա ընդունվեց Եհովա Յահվեի փոխարեն, բայց բնօրինակում դա չորս տառանի բաղաձայններից կազմված Յոդ-հե-վավ բառն է, այսպիսով Նա՝ **Յահվե, Եհովա:**

Ես ձեզ արդեն ասել էի, որ եբրայերենը պատկերավոր լեզու է: Ո՞րն է Եհովայի պատկերը: “Ամենաբարձրյալի” բարձունքից, որին դուք նայում եք և զգում եք Նրա առանձնահատկությունը, Նա ասում է ”Ես պատրաստվում եմ հայտնել Ինձ որպես Եհովա”: Պատկերավոր խոսքը լավագույն ձևով է նկարագրում, թեև նրանք չունենին դա, երբ խոսքը եկավ, բայց սա ժամանակակից նկարագրումն է Եհովա անվան: Մնացեք ինձ հետ աստվածաբանության մեջ, լարեք ձեր ուղեղը և պատկերացրեք, որ ձեր ձեռքերում պահում եք խողովակ:

Դուք երբևէ փորձե՞լ եք խողովակը ձեռքով սեղմելով, արգելափակել ջուրը և զգացել, թե ինչպես է ճնշումը ավելանում, և երբ բաց եք թողնում ճնշումը դուրս է պոռթկում: Մոտավորապես այսպես էլ կարող եմ նկարագրել Եհովա անվան վերացական պատկերը: Բայց և այնպես Աստծո բնավորությունը ճնշում է, ինչպես ձեռքերի մեջ սեղմած ջրի խողովակը, որպեսզի սեղմի և թափի քեզ վրա իր բարիքները: Սա է Եհովա անունը, Աստված ճնշում է, որպեսզի երևա հայտնությունում:

Եվ ժողովրդին, որին ընտրել է իբրև պատգամախոս և նախասահմանել է լինել Իր ձայնը, որը կպատմի ողջ երկրին Աստծո մասին, Նա ասաց. “Ես հիմա պատրաստվում եմ հայտնել Ինձ ոչ միայն որպես **Էլ**, “Բարձրյալ” և ավելին, բայց որպես Եհովա, որը ձգտում է գալ և հայտնել Ինձ ձեզ”:

Ի՞նչպիսի ողբերգություն, որ սատանան շարժվում է և Աստծո մտադրությանը ուղիղ հակառակ հայտնվում է պատգամախոս ժողովրդի մեջ, որովհետև գիտունները առաջ քաշեցին անմիտ գաղափար հերձվածքից վերցված, որ Եհովա անունը այնքան բարձր է, որ մարդիկ չպետք է անգամ արտասանեն այն: Այսպիսով, երբ նրանք կարդում էին գրվածքները, այնտեղ, որտեղ Քինգ Ջեյմսի թարգմանության մեջ գրված է մեծատառերով “ՏԵՐ”, իմացեք, որ մեկնաբանվում է Յահվե, Եհովա:

Բայց հին հրեական երկրպագության նմուշներում, երբ նրանք կարդում էին գրվածքները և հասնում էին Եհովա անվանը, նրանք փոխարինում էին “ՏԵՐ” բառը **Ադոնայ** կամ մեկ ուրիշ անունով: Նրանք չէին արտասանում “Եհովա”: Նրանք խորհրդավոր էին դարձնում այդ անունը: Երբ Աստված մտադրվեց հայտնել Իր անունները ինչպիսին Նա ուզում է լինել և Եհովայի միջոցով, ինչպես որ այն դեպքում երբ Շաղալին ավելանում է Էլ, Եհովան առաջ է գալիս ինչպես ջուրը, սեղմված խողովակի մեջ, հայտնում է իրեն այս յուրահատուկ արտահայտություններով մարդկանց, նշանակված հատուկ կարիքներ լրացնելու համար:

Իսկ հիմա քննարկման առարկան մատակարարումն է: Ես չգիտեմ ինչպիսին է քո խավարը, բայց Եհովա անվանը ողջ Գրվածքով մեկ ավելացվում է Եհովա՝ “ինչ-որ յուրահատուկ”: Քո, ինչպես նաև իմ խավարի մեջ, մենք գտնում ենք անվան արտահայտություն, որը հայտնություն է նրա, ով է Աստված ուզում լինել մեզ համար և հավատքը բռնվում է դրանից և ասում, որ սա համընկնում է իմ կարիքներին: Ջեյմս Գաննը մեկ անգամ ասաց, որ Աստված նման է մի մեծ ծառի, որի վրա կան ճյուղեր բոլորի համար: Ես չեմ սիրում ընդհանրացված քարոզներ, որոնք չեն համապատասխանում մեր իրականությանը և բարդ աստվածաբանության և Աստվածաշնչյան լեզվաբանության օգնությամբ մենք գալիս ենք այն կետին, թե որն է այդ խավարի լուծումը: Իմ խավարի մեջ, որտեղ չկա լույս, ես կասկած չունեմ նրանում, թե ինչ է ասել Աստված լույսի մեջ, և ես իմ խավարի մեջ, փոխարեն նրան, որ իմ սեփական լույսը ստեղծեմ, որպես իմ առաջին ռեակցիան, ես ավելի լավ է գնամ Աստծո անունների մոտ և գտնեմ այնտեղ մեկը, որը կհամապատասխանի իմ իրավիճակին:

Այսպիսով, եթե քեզ մոտ տնտեսական աղետ է, ապա՝ **Եհովա-Իրե**: Ես սկսեցի նրանից, որ ասացի թե քարոզում եմ հավատքի մարդկանց, հավատացյալներին, որոնք հնազանդ են Նրա ծառայի ձայնին և ովքեր խավարի մեջ են: Դու ունես ֆինանսական ճգնաժամ և չ՞ես տեսնում ելք: Բարի, մինչ դու կգնաս և կգտնես մի հանցագործ հյութալի մարդու, որը պատրաստվում է տալ 33% օրական միգուցե, մինչև դու կվառես այդ լուցկին, ընկիր երեսի վրա, խոնարհեցրու քեզ և խնդրիր Աստծուց օգնություն: Դու կկարողանաս ճեղքել քո խավարը, թեև դու չես տեսնում, Աստված է քեզ տեսնում և ասում, “Էյ, մի թույլ սպասիր: Տերը կմատակարարի”: Ահա թե ինչ է նշանակում այդ անունը:

Մեզ մոտ ճեմասրահում կա մի նկար: Աբրահամին տրված ամենամեծ պարգևի մասին, Աստված ասաց. “Ես նրան ետ եմ վերցնում: Բարձրացրու նրան այս սարը և ողջակեզ մատուցիր ինձ”: Սարի լանջին Իսահակը հարցրեց. “Ես տեսնում եմ կրակը, տեսնում եմ մնացած ամեն ինչ, ո՞րտեղ է գոհը”, չիմանալով, որ ինքն է լինելու այդ գոհը:

Երբ Աբրահամն ու Իսահակը պատրաստվում էին բարձրանալ սարը, Աբրահամը մի փոքրիկ արտահայտություն է ասում ծառաներին, որը մարդիկ բաց են թողնում. “Մենք կվերադառնանք”, ոչ թե “Ես կվերադառնամ”: Ահա թե ինչու է Աբրահամը ստանում իր մեծագույն խոստմունքը Աստծուց այդ ժամանակաշրջանում, ահա թե ինչու է այդ պատկերը մեր ճեմասրահում: Աբրահամը վերջապես հասկացավ, որ կարող է վստահել Աստծուն այն աստիճանի, որ չնայած Իսահակը խոստմունքի որդին էր, սերմը, որին սպասել էր ամբողջ կյանքում, եթե նա հնազանդվի Աստծուն և գոհի, Աստված հարություն կտա նրան մեռելներից: Իսահակի ծնունդը հրաշք էր և նրա հարությունը նույնպես հրաշք կլիներ: Աբրահամը նույնիսկ չէր էլ կասկածում, նա և Իսահակը կիջնեն սարից: Եվ այս սցենարում հայտնվում է նոր անուն “ՏԵՐԸ կմատակարարի”:

Ամենա անելանելի իրավիճակում հավատքը պատեց Աբրահամին և նա հռչակեց. “ՏԵՐԸ կմատակարարի”: Նա կմատակարարի մեկընդմիջտ: Հիմա ես չգիտեմ, թե ով է այդ խավարում, և ինձ մանրամասնություններ պետք չեն, բայց մինչ դու կփորձես վառել քո լուցկին, որ լուսավորես այդ ֆինանսական խավարը, այս խոսքը ասում է. “Ապավինիր Տիրոջ անվանը”. Ստացվում է. “Նետվիր, վստահիր ՏԻՐՈՋ անվանը”: Քինգ Ջեյմսի թարգմանության մեջ գրված չէ՞ մեծատառերով Եհովա, **Եհովա-յիրե**.

Միգուցե դու կասես. “Ես այդպիսի խնդիր չունեմ”: Միգուցե քո խնդիրը հիվանդությունն է: Այս առավոտյան ես ուզում եմ մի քանի թույլ խաղալ ստեղծների վրա: Միգուցե հիվանդ ես դու կամ հարազատներիցդ որևէ մեկը և անհույս փորձում ես ելք գտնել այս խավարից: Դու պատկերացնել անգամ չես կարող, քանի անգամ եմ ես եղել իրավիճակներում, երբ բժիշկները ասել են. “Սա անբուժելի է, այլևս ոչինչ հնարավոր չէ անել”: Բայց մեր վերջը դա Աստծո սկիզբն է:

Միգուցե դու հիվանդ ես և պայքարել ես դրա դեմ, բայց թվում է թե ելք չկա, չկա լույս: Վերջապես դադարիր վառել քո սեփական կրակը, բավական է մարգես հավատքդ, սկսիր ապավինել Տիրոջ անվանը՝ **Եհովա-ռաֆֆա**: Ոմանք շահասիրությունից սահելով Աստծո բժշկարար էության վրայով, պարբերաբար եկեղեցու պատմության մեջ շեղում էին մարդկանց Աստծո էության այս կողմից: Բայց դա բացված էր անհնազանդ ժողովրդին, ովքեր անապատում տրտմջում էին իրենց առաջին փորձության ժամանակ և իրենց էլ Աստված ասաց. “Ես եմ **Եհովա-ռաֆֆան**”:

Հիմա թույլ տվեք ասեմ ձեզ մի բան Աստծո անունների մասին: Երբեմն Աստված ուղղակի ուզում էր առաջնորդել այս ժողովրդին, որոնք Նրա պատգամախոսներ էին, մի շարք փորձությունների մեջ, մինչև որ նրանք գային որոշակի եզրակացության, դիտելով և տեսնելով ինչպես է Աստված գործում: Այնուհետև, մի շարք շարունակական ճշգրիտ իրադարձությունների պատճառով, նրանք որոշում էին Իրեն անուն: “Ուրեմն, Աստված այսպիսին է”: Ես այս անունը ասում եմ, երբ նա հետևում և իր մտքում պտտում էր, թե ինչպես է

վարվել Աստված իր ժողովրդի հետ պատմության ընթացքում: Եսայան դա ասաց, ոչ թե Աստված: Եսայան ասաց. “Հիրավի, դու ծածկապատված Աստված ես”:

Բայց ժամանակ առ ժամանակ այդ անունները դուրս են գալիս հենց Աստծո շուրթերից: Կարծես Նա չի ուզում սպասել մինչև մեր փորձը սովորեցնի մեզ: Նա ուղղակի բացում է պատուհանները և ասում. “Ահա, թե ինչպիսին եմ Ես, ահա թե Ով եմ ես ուզում լինել”: Եվ Նա տեսնելով առիթ այս անհնազանդ ժողովրդի մեջ, ասում է. “Ես Եմ” մշտական վիճակ, որակյալ անձ, անձը չի կարող լինել առանց բնորոշ առանձնահատկության՝ “Ես եմ **Եհովա-ուաֆֆան**”:

Ես հիշում եմ մի հանճարեղ գիտնականի Մինեսոտայի համալսարանից, որի կյանքի վկայությունը, որպես Աստծուն հավատացող գիտնականի, շատ տարիներ օգտագործում էր Բիլլի Գրեմը: Ինձ զանգահարեց Ջորջ Օտիսը ասելով. “Ժենե, Ֆռեդը հիվանդանոցում է և նրա մոտ ստամոքսի խցանում է: Նա կմահանա, եթե չկարողանան վիրահատել և լուծել խնդիրը, և ինձ թվում է, որ դու այն մարդն ես, որ պետք է թռչես և խոսես նրա հետ, որովհետև դուք ունեք ընդհանուր ակադեմիական կրթություն”: Ես չտատանվեցի: Ես թռա Մինեսոտա, Մինեապոլիս: Ես գնացի տեսնելու Ֆռեդին և մոտ մեկ ժամ անցկացրեցի նրա հետ, փորձելով գտնել պատճառներ, որոնց համաձայն կարող ենք միասին աղոթել և Աստված կարող է բժշկել: Վերջապես, ես զայրույթով ասացի. “Ֆռեդ, Աստծուն պետք չեն պատճառներ, բացի նրանից, թե Ով է Ինքը: Նա ասել է, որ դա Իր էության մի մասն է”: Չեզ պետք չեն այս բոլոր դատարկ բաները, որի վրա շեշտադրում են ուրիշները: Ես և դու երկուս ենք... Խոսքը ասում է. “Որտեղ երկուսը և երեքը երկրի վրա համաձայնվեն և ինչ էլ որ խնդրեն...” և “Եթե երկուսը հավաքվեն Նրա անունով, Նա նրանց մեջ է”: Այն, ինչ պետք է մենք անենք Ֆռեդ, թույլ տանք Աստծուն լինել այնպիսին, ինչպիսին որ Նա կա: Մենք չպետք է համոզենք Նրան, որ բժշկի: Դա Նրա էությունն է, Նա բժշկող Աստված է: Ես չեմ կարող հասկանալ Նրա անկախությունը, մենք չենք կարող Աստծո ձեռքից վերցնել կյանքի բանալիները, բայց ես գիտեմ, երբ խոսում եմ բժշկության մասին, ես Նրա կողմից եմ: Նա մեզ չի ստեղծել տառապանքի համար: Մենք ինքներս ենք խառնաշփոթ ստեղծում մեր կյանքում, ստեղծում խնդիրներ և տառապանքը գալիս է խավարի պես, բայց Աստված խոսում է սուրբերի մահվան մասին, “Նա վերցրեց նրանց հոգին”:

Ես մեկն եմ այն քարոզիչներից, որոնք... Ես պատրաստվում եմ դա ասել. “Դու կարող ես վիճել ինձ հետ, եթե դու ենթադրում ես, որ որոշ սուրբեր հիվանդության պատճառով երկրորդ տեսակի քրիստոնյաներ են: Բայց պարադոքսալ է, նույն կերպ ես պատրաստվում եմ ասել, որ եթե դու հիվանդության կամ ցանկացած ուրիշ քեզ վերաբերվող խավարի մեջ ես, մինչև դու ինքնուրույն կփորձես լուծել խնդիրը, ապավինիր այս Անվանը: Տեր, դու ասացիր, որ բժշկելը Զո էությունն է: Ես պատրաստվում եմ վերցնել այդ յուրահատուկ հայտնությունը և թույլ տալ, որ դա լինի լույս իմ խավարում”:

Ես նոր եմ ժամանել Նյու Յորքից: Ես ասում եմ ձեզ որ ամպերից վեր աստղերը, լուսինը՝ ամեն ինչ դեռ փայլում են: Իսկ ամպերի տակ դու կարող ես մոռանալ դրա մասին, բայց դու պետք է հիշես, որ վերևում, խավարից վեր, Աստված նույնն է երեկ, այսօր և հավիտյան, և ապավինիր, եթե քո խավարը հիվանդությունն է, այդ Անվանը:

“Լավ, բայց իմ խնդիրը այդպիսին չէ: Ես նստած եմ այստեղ այսօր և ինձ անարժան եմ զգում այս ծառայության մեջ մեղքի պատճառով“: Մենք բոլորս ենք սխալվում: Հիմա ես, իհարկե, չեմ սահմանում մեղքը ինչպես ֆունդամենտալիստներն են դա անում՝ ամեն բան մեղք է: Մեղքը՝ երբ մենք թեքվում ենք Աստծո ճանապարհներից դեպի մերը: Մեղքը երկար չի ապրում, և որքան մոտ ես դու Աստծուն, այնքան ավելի զգայուն է քո խիղճը: Մենք բոլորս ունեցել ենք մեղքի զգացումը, ահա թե ինչու “Չարմանալի շնորք” երգը ունի համընդհանուր հրապուրանք, բայց կան ավելի խավար ժամեր, որ դեռ գալու են: Դա բնական է, նորմալ է: Եվ միզուցե իմ ձայնի մեջ մեկ ուրիշ անառակ որդի է... կամ դուստր, մինչև մահ ծեծված մեղքի խավարից, և դու մեկ ուրիշ տեսակի խավարի մեջ ես: Դա տեղի է ունենում, երբ դու ունես Տիրոջ վախը, հնազանդվում ես Նրա ծառայի ձայնին, բայց խավարի մեջտեղում մեղավորության զգացում է

գալիս, որովհետև Սատանան, մեր եղբայրների չարախոսը, նստած է այնտեղ և հիշեցնում է մեր անցած մեղքերը:

**Եհովա-ցիտկենու:** Ես պատրաստվում եմ արագ առաջ գնալ: Եհովա-ցիտկենու. “Նա է մեր արդարությունը”: Նա բացահայտեց Եհովա անվան մեջ, որ ուզում է լինել մեր արդարությունը: Նա վերցնում է մեր հավատքը, դնում է ակնոցներ և նայում է մեզ կարծես թե մենք Հիսուս Քրիստոսն ենք կրկին մարմնավորված և դնում է մեր մեջ Իր կյանքը, որպեսզի բնակվի այնտեղ և օգնի մեզ հաղթահարել մեր բնավորության բարդությունները: Նա տալիս է մեզ Իր արդարությունը: Ահա թե ինչու եմ ես այդպես ֆանատիկորեն դատապարտում ֆունդամենտալիստների ինքնարդարությունը: Եթե քո խավարը մեղավորության զգացումն է, ապավինիր **Եհովա-ցիտկենու** անվան վրա:

“Ես մոտ եմ նյարդային խանգարման: Ես միշտ մտածում եմ գալիք բաների մասին: Ես անհանգիստ եմ, Ես չգիտեմ դա ինչ է: Ես ուղղակի... դա իմ նյարդերն են”:

**Եհովա-շալոմ:** Խորը շունչ քաշիր մինչև որ դու կզնաս հոգեբանի մոտ և կվճարես ժամը \$500, որ պատմես իրեն ամեն ինչ, քո խառնաշփոթ անցյալի մասին, որը հիմա էլ նույնն է: Պարզապես խորը շունչ քաշիր, ապավինիր Տիրոջը և ասա. “Տեր, Քո անունը **Եհովա-շալոմ է**”: Ասա դա մտնելիս և դուրս գալիս. “Նա է մեր խաղաղությունը”: Նա իրականում կարող է լինել, եթե դու պարզապես հայացքդ հեռացնես խավարից և կենտրոնանաս Իր Անվան վրա: Աստվածաշունչն ասում է, որ “Նա հրամայել է հրեշտակներին քեզ համար” և “կպահես նրան կատարյալ խաղաղության մեջ... կատարյալ խաղաղության մեջ, նրանց, ում միտքը հաստատ է Քո մեջ”: Ես ասում եմ ձեզ մարդիկ, ես եղել եմ այդ վիճակում երկար ժամանակ: Ես ամենից ապստամբն եմ, ում երբևէ փորձել է Աստված կառավարել, բայց ես գիտեմ, երբ վարվում եմ Աստծո ձևով (ես չեմ քարոզում պարզապես վերացական մտքեր) դա գործում է: Նա կարող է լինել քո խաղաղությունը: Նա այնտեղ է, որտեղ դու: Նա ավելի մեծ է, քան քո խնդիրը:

“Ես չգիտեմ, թե ո՞րը կլինի իմ կյանքի հաջորդ քայլը: Ես նկատի ունեմ, որ որոշումներ եմ կայացրել և...” Քանի՞սն են ձեզանից հայտնաբերել, դու գնում ես... և ոչ մի հեռանկար: Հետո այն հայտնվում է և հետո ևս քառասուն: Քանի՞սդ եք դա նկատել: Ահա, ես գնում եմ, ցանկանալով գոնե մեկ ընտրություն ունենալ, բաց դուռ չկա, տարբերակ չկա, և հետո կարծես խորտակվողին մեկը նետում է փրկարար օղակ և հանկարծակի փրկարար նավի կողմից նետում են ևս քառասուն օղակ, մինչև որ ես ստիպված եմ սուզվել ջրի տակ, որ խուսափեմ գլխիս տեղացող հարվածներից: Հետո սկսում եմ խորտակվել, չիմանալով, որ մի օղակից բռնվել: Հանգստացիր, հանգստացիր: Նրանցից մեկը դուրս կթռչի քթիդ առջև, որովհետև **Եհովա-բոհի:** Ապավինիր վստահության գաղափարին “Տերը իմ հովիվն է”, Նա առաջնորդում է ինձ:

Ես քարոզում էի սա 2 շաբաթ առաջ մեկ այլ կոնտեքստում: Երբ դու քարոզում ես փիլիսոփայություն, այլ ոչ թե կոնտեքստից անջատված մի միտք, Աստվածաշունչը նույն բանի մասին ասում է տարբեր ձևերով, որ մենք բոլորս վերջապես հասկանանք: “ՏԵՐԸ իմ հովիվն է”: Միջին Արևելյան աշխարհի հին զգացողություն, որտեղ հովիվը արածացնում է հոտը: Նա չէր քշում նրանց, այլ առաջնորդում էր: “ՏԵՐԸ իմ հովիվն է”, Նա առաջնորդում է ինձ: Ապավինիր դրան, գնա տուն և կարդա 23-րդ սաղմոսը, միգուցե մարդկային գրականության գերագույն արտահայտությունը. “Տերը իմ հովիվն է, կարոտություն չեմ ունենա”:

Երբայերենում գրված է. “Նա հեռացնում է կարիքի պատճառները, նույնիսկ ինձ համար սեղան է զգում թշնամիների առջև: Նա քեզ բաց չի թողնի: Մեր ուժը Նրա մեջ է, որովհետև Նա մեզ հետ է: Նա է գործերի Տերը, բայց Նա նաև թշնամիների Աստվածն է, կամ իմ թշնամիների ներկայությամբ”:

“Տերը իմ հովիվն է”. Նա կառաջնորդի քեզ, բայց դու պետք է մի հատուկ գործողություն կատարես: Վերջին շաբաթների ընթացքում ես դրա մասին մի քանի անգամ խոսել եմ՝ դու սեփականացնում ես Աստծո խոստմունքները Նոր Կտակարանի շրջանակներում: “Մարդը սրտով հավատում է, և շուրթերով դավանում”: Դու նետվում ես Աստծուն և ասում. “Տեր, դու իմ



հովիվն էս: Նա կառաջնորդի ինձ: Նա կհարթեցնի իմ ճանապարհը. Նա ինձ ցույց կտա ելքը”: Դեռ անցած տարի ես սրան չէի հավատում: Ես բավականին ժամանակ չէի անցկացնում այս բացառիկ Անվան շուրջ անցած տարի, որովհետև ես իրականում չէի հավատում դրան, ես պարզապես ուզում էի հավատալ: Նույնպես ես ունեի որոշ մտքեր այն մասին, թե որտեղ պետք է գնար հովիվը, բայց Նա չէ՛ր համազործակցում: Ես կարծում էի ունեմ հիմար հովիվ և այս մասը լավ չէի քարոզում: Այսօր ես կարող եմ ասել. “ՏԵՐԸ իմ հովիվն է”: Նա իրոք առաջնորդում է, “Ես կարոտություն չեմ ունենա”: Եվ Նա կլինի նաև քո հովիվը: Ինչպիսին էլ լինի քո խնդիրը, Աստված կլինի քո հովիվը:

**Եհովա-շամմա:** Ժամանակը վերջանում է: Մինչ ես կանցնեմ մնացած Անուններին, ինձ հարկավոր է հենց այս մեկը, Եհովա-շամմա՝ “Աստված այնտեղ է”: Այս անուններից ամեն մեկը Աստված տվել էր այն ժողովրդին, որին ընտրել էր լինել պատգամախոս, որպեսզի նրանք կարողանային պատմել մնացած աշխարհին, թե ինչպիսին է Նա: Եվ Նա ընտրեց խոսք, որը կնշանակեր..., նման սեղմելուն, որ դուրս պրծնի, “Ահա թե ինչպիսին եմ Ես ուզում հայտնվել Իմ ժողովրդին, որպեսզի դուք իմանաք, ինչի վրա ապավինեք, երբ խավարը գա: Սա լույս է, որը վեր է խավարից: Դու չես կարող տեսնել դա, Բայց Ես այնտեղ եմ, և այնտեղ լուսավոր է: Չգվիր և վերցրու:”

Եհովայի այս բոլոր անունները այսպես թե այնպես համապատասխանում են իմ բոլոր հանգամանքներին, իսկ եթե ոչ մեկը չի համապատասխանում, ուրեմն Եհովա-շամմա՝ “ՏԵՐԸ այնտեղ է”: Որտե՞ղ էլ ես լինեմ խավարի մեջ, ի՞նչ էլ որ ես անեմ, ու՞ր էլ որ գնամ, Նա միշտ այնտեղ է: Ես չեմ հասկանում այդ խորհրդավոր գաղափարը, ես վերցնում եմ դա հավատքով: Ես երբեք մենակ չեմ; Նա այնտեղ է՝ **Եհովա-շամմա:**

Ես դեռ ունեմ ևս մի երկու անուն, նայենք **Բ Օրին. 33:** Աստված օգտագործում է մի փոքր անսովոր անուն: Մի թերթեք, ես ուղղակի կպատմեմ: 16-րդ խոսքում Չորաց Տիրոջ մասին է ասում Մովսեսի հզոր երգը: Բ Օրին 33-ում Մովսեսը նայելով իր ողջ կյանքին, ասում է իր վերջին խոսքը ժողովրդին, որին հանել էր ստրկությունից, որի հետ էլ անցել էր անապատը:

Քանի որ նրանք բարկացրել էին նրա հոգին և դա այն խնդիրն է, որին հանդիպում է ամեն առաջնորդ: Նրանք բարկացրին Մովսեսի հոգին և նա խփեց ժայռին երկրորդ անգամ և դրանով քանդեց Քրիստոսի խորհրդապատկերը, Որը մեկ անգամ էր մահացել, նա մերժվեց խոստմունքի երկրից: Մովսեսը աղաչում էր Աստծուն, թույլ տալ իրեն մտնել, բայց Աստված ասաց. “Ոչ”: Սակայն, բարկությունը չէր նրա դժբախտության պատճառը: Մինայ Մարի վրա Մովսեսը բարկացավ և ջարդեց վկայության տախտակները, բայց այդ դեպքում նրա բարկությունը ծառայեց Աստծո հայտնությանը, քանզի դարձավ օրինակ նրա, որ օրենքը կլինի խախտված, օրենքը կխախտվի մարդկային ձեռքերով և կարող է կատարվել վկայության տախտակների երկրորդ քարի գրվածքներով Ուխտի տապանակի մեջ, որը Քրիստոսի խորհրդապատկերն է:

Այսպիսով, Նրա բարկությունը ծառայեց Աստծո հայտնությանը: Բայց երբ ապստամբները բարկացրին Մովսեսի հոգին այնքան, որ երբ Աստված խոսեց նրա հետ “ասա՛ ժայռին” որին նա արդեն հարվածել էր և ջուրը հոսեց: Իր բարկության մեջ նա բարկացավ ժողովրդի վրա. “Դու՛ք, անհնազանդներ”: Եվ հարվածեց ժայռին: Եվ բանը հենց բարկության մեջ չէր, այլ նրանում է, որ բարկությունը դրդեց նրան խորհրդապատկերը քանդող գործողության, որովհետև ժայռին, որպես Քրիստոսի խորհրդապատկեր, պետք էր հարվածել մեկ անգամ: Այսպես Մովսեսը գրկվեց խոստմունքի երկրից: Հետո Նա ասաց. “Տեք, կարո՞ղ եմ գոնե տեսնել այն”: Եվ Աստված բարձրացրեց նրան Նաբավ սարի վրա և թույլ տվեց տեսնել խոստմունքի երկիրը, բայց արգելեց մտնել: Եվ Մովսեսը ասաց իր վերջին խոսքը ժողովրդի առաջ և դա վերաբերվում է “Եհովա-շամմա, “ՏԵՐԸ այնտեղ է” անվանը:

Նա հիշեցնում է այն Աստծո մասին, որի մասին խոսում է նրանց հետ: Նա չի խոսում Մինայ Մարի Աստծո մասին, Ով պատվիրել էր նրան բարձրանալ այնտեղ և որոտի, ամպրոպի ու կայծակի մեջ գրեց Օրենքը: Ոչ: Ի՞նչ է նա ասում, որ դուք կունենաք “մորեցնում բնակվողի

բարեհաճությունը”։ Սա միակ մատնացույցն է ողջ Աստվածաշնչում այդ իրադարձությանը, որտեղ 40 տարի փախուստի մեջ փարավոնից, 40 տարի մտքերով, որ լքված է (նկատի ունենալով խավարը), 40 տարի անապատում առանց անգամ մեկ խոսքի Աստծուց, և հանկարծ այդտեղ, նա տեսնում է իր առջև այրվող, բայց չսպառվող մորենին և Խոսացողի ձայնը։ Ինչպես ես ասացի անցած կիրակի կամ ավելի վաղ, Չայնը չասաց. “Հե՛յ, դու այնտեղ”, կամ էլ. “Հե՛յ, հովիվ”։

40 տարի առանց լուրի, Աստված ճշգրիտ գիտեր, թե որտեղ էր Մովսեսը և Նա մարմնավորվեց մորենում և ասաց. “Մովսես”։ Նա դիմեց Մովսեսին անունով։ Հիմա ամեն կատարվածը՝ ջրի քաղցրացումը, Կարմիր ծովի բացվելը, կայծակն ու ամպրոպը Սինայ սարի վրա, աղոթքը և Մարիամի բորոտությունից բժշկվելը, հարվածը ժայռին, որից ջուր եկավ... հուշեր, որոնք մնացին իր հետ ողջ կյանքի ընթացքում և դրդեցին նրան դիմել Աստծուն, և փաստորեն տալ Նրան անուն “Աստված մորենու միջից” և հենց այդ իրադարձությունը թույլ տվեց Մովսեսին հասկանալ, որ ինքը երբեք չի եղել Աստծո ներկայությունից դուրս, անկախ հանգամանքներից։

Այնուհետև նա օգտագործում է “բարեհաճություն” արտահայտությունը, որը ոչ այնքան դիպուկ է։ “Բարեհաճություն”..., “շնորհք”..., “բերկրանք”...: Դա երկիմաստ բառ է, որը թարգմանվում է “բարեհաճություն” “հաճույք, հիացմունք” և “մասնակցել ինչ-որ մեկի կյանքին”։ Աստծո “բարեհաճություն”, որ հիանում է քեզանով և կմասնակցի քո կյանքին, ուղղություն կտա, եթե դու խնդրես Նրան։ Հենց սա է “Աստված մորենու միջից”։ Եթե ձեզ մոտ Աստվածաշունչ է 26 թարգմանությունով, **Բ Օրինաց 33.16**-ում թարգմանված է. “Աստված, Ով շեկինահեղ”։ Այս բառը նման է “Շեկինահ՝ փառք”, Աստծո ներկայության պայծառություն։ Մենք ասում ենք “Շեկինահ” այն դեպքում, երբ Սրբության Սրբոցում Ուղտի Տապանակի վրա լույս էր հայտնվում Բավոնյան Օրը Աստված հայտնում էր Իրեն ինչպես լույս՝ **“Շեկինահ”**։

Այն, ինչ ասվում է 16-րդ խոսքում, “Աստված շեկինահեղ մորենու միջից”, և 26 թարգմանությունում “փշոտ թուփ” տձև, կեղտոտ, փոշոտ տատասկ։ Ոչ կայծակը և ցնցումները, ոչ ամպրոպը և ոչ էլ Կարմիր ծովի բացվելը, չէին տպավորվել Մովսեսի մտքում այդ բոլոր տարիների ընթացքում։ “Աստված “փշոտ թփի միջից իջավ իմ խոնարհության տեղը և այդ կեղտոտ, փոքր ու փշոտ թփից կանչեց ինձ անունով։ Աստված, որը ինձ հետ է, **Եհովա-շամմա**”։ Նա միշտ այնտեղ է։ Ինձ համար միևնույն է, թե ինչպիսին է քո խավարը։ Ով էլ դու լինես, Աստված այնտեղ է, քո խավարում, սպասելով, որ դու ապավինես այդ անվանը։

Ես չեմ վերջացրել։ Վերջին արտահայտությունը. “Թող ապավինի” կամ “նետի իրեն... ՏԻՐՈՋ անվան վրա, և հաստատվի Տիրոջ վրա”։ “Հաստատվի” բառը այս խոսքում, որ մենք հաճախ օգտագործում ենք **“շաան”** բառն է։ **“Շաան”** արմատը նշանակում է “հենվել գավազանի վրա”։ Ես ձեզ շատ խոսքեր ասացի հավատքի մասին, բայց նրանք բոլորը գործողություն են նշանակում։ “Հաստատվի” բառը նշանակում է “հենվել գավազանի վրա”։ Այն երբեմն օգտագործվում էր հին ծովագնացային լեզվում և նշանակում էր՝ իջեցնել խարիսխը և մնալ այդ խարսխի վրա, իսկ հիմնականում՝ հենվել գավազանի վրա կամ մի հիմքի, որի վրա կարող ես հենել բաներ։

Մենք ունենք իրավունք... մենք պատկանում ենք Աստծուն, եթե Քրիստոնյա ենք, բայց պարադոքսալ է, որ դու կարող ես կիրառել այն քո և իմ խավարի մեջ... Եթե դու ապավինես այն անվանը, որը համապատասխանում է քո կարիքին՝ եթե դա մատակարարում է՝ **“Եհովա-իրն”**; եթե առողջություն կամ բժշկություն՝ **“Եհովա-րաֆֆա”**; եթե առաջնորդություն կամ ուղղություն՝ **“Եհովա-րոհի”**, և բոլոր անունները մինչև **“Եհովա-շամմա”**։ “ՏԵՐԸ այնտեղ է”։

Մեկ անգամ կենտրոնանալով այն հայտնության վրա, որ քո կարիքների համար կա կոնկրետ Աստծո անուն, Աստվածաշնչի այդ խոսքը ինձ իրավունք է տալիս, սեփականացնել այս հայտնությունը “հենվել իմ Աստծո վրա”։ Թող մնացած ամեն ինչ... Եթե անունը չի համապատասխանում քո կարիքին, մի կողք դիր այն, բայց հասիր Աստծո հայտնության ծառին և հավատքով վերցրու այն կոնկրետ անունը, որը համապատասխանում է քո կարիքին։ Սեփականացրու այն։ Եղի՛ր ֆանատիկոս քո սեփականացրածի նկատմամբ։

“Մա իմն է, սա իմ խոստմունքն է”: Թող մնացած ամեն բան այս խավարում կողք քաշվի: Ես պահում եմ իմ հավատքի ձեռքը այն բանի վրա, ինչի վրա ես պատրաստվում եմ կանգնել, հենվել, խարխիսի նետել, կառուցել: Ես դա սեփականացնում եմ: Ես կարող եմ պատկանել Աստծուն, բայց Նա տվել է ինձ օրինական իրավունք, դարձնելու Իրեն իմ անձնականը, այս հատուկ բնագավառներում՝ Նա է իմ **Աստվածը**... Նա է իմ **Տիրակալը**... Նա է իմ **Բժիշկը**... Նա է իմ **Մատակարարը**... Նա է իմ **Խաղաղությունը**... Նա է իմ **Արդարությունը**... Նա է իմ **Հովիվը**... Նա է իմ **Ներկայությունը**... Նա իմն է:

Եթե իմանաս, թե ինչն է քեզ պատկանում, դու կազատվես խավարից և ես հռչակում եմ, որ եթե անգամ մազապուրծ լինեմ մահից, ապա կհառնեմ այնտեղ, որտեղ ամպը չի փակում լույսը: Ահա իմ այսօրվա ուղերձը:

Հեղինակային իրավունք © 2007թ. Հովիվ Մելիսսա Սքոտ. բոլոր իրավունքները վերապահված են